ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 11

ԵՊՀ-ի Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 2024 թվականի ապրիլի 9-ին կայացած Գիտական Խորհրդի N 11 նիստի

Նախագահ – Ս.Ս.Քելյան

Քարտուղար – Ե.Ս.Մանուկյան

Ներկա էին՝ 32 անդամներից 25-ը (ցուցակը կցվում է)

Նախքան նիստի մեկնարկը Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկան Սարգիս Քելյանը և տնօրեն Վ.Կիրակոսյանը հավաստագրեր շնորհեցին փետրվարի 29-ին ՀԱՊՀ-ում կայացած «Կրիտիկական մետաղներ. Հայաստանում լիթիումի ուսումնասիրությունների արդի վիճակը և կորզման հիմնախնդիրները» թեմայով աշխատաժողովին մասնակցած ուսանողներին (Սարուխյան Գոհար-սերվիս 4-րդ կուրս, Տաշյան Մարիամ-սերվիս մագ. 1-րդ կուրս, Մեհրաբյան Իրինա-աշխարհագրություն 3-րդ կուրս, Հովհաննիսյան Ալեն-երկրաբանություն 2-րդ կուրս, Պետրոսյան Նանե-սերվիս 2-րդ կուրս).

Խորհրդի նախագահ Ս.Ս.Քելյանը հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

Օրակարգ

1. **ա/ 2023/2024 ուստարվա բակալավրի առկա ուսուսման մասնագիտական և մանկավարժական (3-րդ կուրսի) պրակտիկաների արդյունքների ամփոփում:**
   բ/ Առկա ուսուցման մանկավարժական (4-րդ կուրս) և հեռակա ուսուցման մասնագիտական (5-րդ կուրս) պրակտիկաների կազմակերպման ընթացքը ֆակուլտետում
   /զեկ.ամբ.վարիչներ, գրասենյակի ղեկ.-դեկանի տեղ. Գ.Փ.Ալեքսանյան/

2. **2023/2024 ուս.տարվա առկա և հեռակա ուսուցման 1-ին կիսամյակի քննաշրջանի 1-ին և 2-րդ լուծարքային շրջանի արդյունքները**
   /զեկ.գրասենյակի ղեկ.-դեկանի տեղ. Գ.Փ.Ալեքսանյան/

3. **Ուսանողների հաճախումները և աշխատանքային կարգապահությունը ֆակուլտետում**

/զեկ.գրասենյակի ղեկ.-դեկանի տեղ. Գ.Փ.Ալեքսանյան/

4. **2024/2025 ուստարվա մագիստրոսի և բակալավրի մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնական պլանների քննարկումն ու հաստատումը**

/ամբ. վարիչներ/

5. **«Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի» ամբիոնի վարիչի ժ/պ հաշվետվությունը ամբիոնում կատարված աշխատանքների վերաբերյալ**

/զեկ.ամբ.վարիչի ժ/պ Ա.Ս.Փիլոյան/

6. **Ընթացիկ հարցեր**

Օրակարգը հաստատելուց հետո

1. ԼՍԵՑԻՆ. ա/ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի գրասենյակի ղեկավար-դեկանի տեղակալ **դոց.Գ.Փ.Ալեքսանյանի**, Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի վարիչ **դոց.Վ.Վ.Գրիգորյանի**, Սերվիսի ամբ.վարիչ **դոց.Ս.Ռ.Սուվարյանի**, Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբ.վարիչի ժամանակավոր պաշտոնակատար **Ա.Ս.Փիլոյանի**, Ռեգիոնալ երկրաբանության և Օգտակար հանածոների հետախուզման ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար **դոց.Վ.Մ.Մանուկյանի** և Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի վարիչ **դոց.Ա.Թ.Գրիգորյանի** հաղորդումը 2023/2024 ուստարվա բակալավրի առկա ուսուսման մասնագիտական և մանկավարժական պրակտիկաների արդյունքների, ինչպես նաև առկա ուսուցման մանկավարժական և հեռակա ուսուցման մասնագիտական պրակտիկաների կազմակերպման և ընթացքի վերաբերյալ: Գ.Ալեքսանյանը ներկայացրեց մասնագիտական պրակտիկային մասնակցած ուսանողների թվային տվյալներն ըստ մասնագիտությունների, կարևորեց մասնագիտական պրակտիկայի նախապատրաստական փուլը և հաղորդման ընթացքում խորհրդի անդամներին ներկայացրեց ղեկավարների կողմից խմբագրված հաշվետվությունների արդյունքները: Հաղորդման ընթացքում Գ.Ալեքսանյանը ներկայացրեց մանկավարժական պրակտիկայի ստուգարքների հանձնման հաստատված

ժամանակացույցը, արձանագրեց նաև, որ մասնագիտական պրակտիկաններն ավարտվել և ամփոփվել են registrar համակարգում՝ արդյունքում դուրս մնացող ուսանող չի գրանցվել: Հաղորդման ավարտին ամբիոնի վարիչները խոսեցին ղեկավարների գործառույթի մասին և նշեցին, որ պրակտիկայի ընթացքը վերահսկվել է ղեկավարների կողմից, եղել են մշտական կապի մեջ ընդունող կողմի/կազմակերպությունների հետ: Դոց.Ա.Գրիգորյանը հաղորդման ընթացքում ներկայացրեց պրակտիկաների ընթացքը, տարվող նախապատրաստական աշխատանքները: Նշեց, որ ընդունող կազմակերպություններից բացասական արձագանք չի գրանցվել և ուսումնական պրակտիկայի արդյունքում թվով 3 ուսանող աշխատանքի առաջարկ են ստացել, ինչն Ա.Գրիգորյանը համարեց դրական ցուցիչ: Խոսքն ամփոփելով ամբիոնի վարիչները նշեցին, որ հաշվետվությունների առցանց բնույթը ստիպում է ուսանողներին զգոնություն ցուցաբերել պրակտիկայի ամբողջ ընթացքում: Դոց.Ս.Ռ.Սուվարյանն առաջարկեց բացի ռեկտորատի կողմից մշակված առցանց հաշվետվություններից, ուսանողներից պահանջել նաև ընդունող կողմի/ձեռնարկության մասին ամփոփ հաշվետվություն:

բ/ Ներկայացվեց ընթացիկ առկա ուսուցման մանկավարժական (4-րդ կուրս) և հեռակա ուսուցման մասնագիտական (5-րդ կուրս) պրակտիկաների կազմակերպչական բնույթը և նախապատրաստական փուլում իրականացված արձանագրումները:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ. Դեկան Ս.Քելյանն իր ելույթում խոսեց պրակտիկայի ընթացքի և իր կողմից վերահսկման մասին: Ցավով նշեց, որ ղեկավարների ուշադրությունից դուրս է մնում պրակտիկայի ընթացքը, փոխարենն այն կենտրոնացած է պրակտիկայի սկզբնական և եզրափակիչ փուլերի վերահսկման վրա: Դեկանը կոչ արեց մշակել հավելյալ մեխանիզմներ, ինչը թույլ կտա վերահսկել պրակտիկայի միջանկյալ, այսինքն՝ ընթացիկ փուլը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ընդունել ի գիտություն

2. ԼՍԵՑԻՆ. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի գրասենյակի ղեկավար-դեկանի տեղակալ **դոց.Գ.Փ.Ալեքսանյանի** հաղորդումը **2023/2024 ուս.տարվա առկա և հեռակա ուսուցման 1-ին կիսամյակի քննաշրջանի 1-ին և 2-րդ լուծարքային շրջանի արդյունքները:** Մանրամասնորեն ներկայացվեցին թվային տվյալներ ըստ մասնագիտությունների և կուրսերի:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ընդունել ի գիտություն

3. ԼՍԵՑԻՆ. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի գրասենյակի ղեկավար-դեկանի տեղակալ **դոց.Գ.Փ.Ալեքսանյանի** հաղորդումը **ուսանողների հաճախումների և ֆակուլտետում աշխատանքային կարգապահության վերաբերյալ:** Գ.Փ.Ալեքսանյանը ցավով նշեց, որ ուսանողների բացակայությունները գլոբալ խնդիր է և մտահոգություն հայտնեց օրակարգային դարձած հարցի վերաբերյալ: Նշեց, որ մատյաններից դուրս են բերվել ուսանողների բացակայությունները ու 60 և ավել բացակայություն ունեցող ուսանողների անձնական էլ.հասցեներին ուղարկվել են տեղեկատվական նամակներ:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ. **Դեկան Ս.Ս.Քելյանն** իր ելույթում ներկայացրեց ուսանողների բացակայությունների կարգը, խոսեց բառացիկ դեպքերից և հստակեցրեց հարգելի համարվող բացակայությունների կետերը: Խորհրդի ուշադրությունը հրավիրեց այն փաստին, որ ուսանողների բացակայությունների դեմ պայքարելը միայն ֆակուլտետի դեկանի, գրասենյակի ղեկավար-դեկանի տեղակալ և գրասենյակի աշխատակիցների գործառույթը չէ և ելույթի ավարտին կոչ արեց ամբիոնի վարիչներին ամբիոնի նիստերում քննարկման նյութ դարձնել բարձրացված խնդիրը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Համաձայն ***ԵՊՀ գիտական խորհրդի նիստում ընդունված «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ներքին կարգապահական կանոնների՝*** ուսումնական կիսամյակի ընթացքում դասերից 60 ակադեմիական ժամից (հեռակա ուսումնառության համակարգում սովորողների դեպքում՝ 25

ակադեմիական ժամից) ավելի անհարգելի բացակա ունեցող ուսանողներին հայտարարել **նկատողություն** ֆակուլտետի **դեկանի** կողմից:

4. *ԼՍԵՑԻՆ.* Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի վարիչ **դոց.Վ.Վ.Գրիգորյանի**, Սերվիսի ամբ.վարիչ **դոց.Ս.Ռ.Սուվարյանի**, Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբ.վարիչի ժամանակավոր պաշտոնակատար **Ա.Ս.Փիլոյանի**, Ռեգիոնալ երկրաբանության և Օգտակար հանածոների հետախուզման ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար **դոց.Վ.Մ.Մանուկյանի** և Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի վարիչ **դոց.Ա.Թ.Գրիգորյանի** հաղորդումը **2024/2025 ուստարվա մագիստրոսի և բակալավրի մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնական պլանների վերաբերյալ:** Ամբիոնի վարիչները ներկայացրեցին պլաններում իրականացրած փոփոխությունները: Որոշ ուսումնական պլաններում փոփոխությունները կիրականացվեն ամբիոնների մաիձուլման գործընթացն ավարտին հասցնելուց հետո: Կային նաև փոփոխության չենթարկված կրթական ծրագրեր՝ նոր մասնագիտության բացման հայտ ներկայացնելու մենկաբանմամբ: Դոց.Ս.Սուվարյանը կարևորեց օտար լեզուների իմացությունը և ըստ այդմ՝ մեծացվել են օտար լեզուների ընտրության և յուրացման (լսարանային ժամերի) հնարավորությունները, իրականացվել են դասընթացների/առարկաների կիսամյակային որոշ փոփոխություններ: Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի կրթական ծրագրում կատարվել են բավականին շատ փոփոխություններ՝ պահպանելով թույլատրելիի շեմը չգերազանցելու կարգը: Իրականացվել են առարկաների կիսամյակային փոփոխություններ, վերնագրերի խմբագրումներ, դասընթացները հնարավորինս հնամապատասխանեցվել են ժամանակի պահանջներին:

5. ԼՍԵՑԻՆ. **«Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի» ամբիոնի վարիչի ժ/պ Ա.Ս.Փիլոյանի հաշվետվությունը ամբիոնում կատարված աշխատանքների վերաբերյալ:** Փիլոյանը ներկայացրեց ամբիոնի տեսլականը, թվեց կրթական ծրագրերի արդիականացմանն և ժամանակի պահանջներին համապատասխանեցմանն ուղղված քայլերն ու դրանց հերթականությունը: Խոսեց գործող և մշակման/կազմման փուլում գտնվող կրթական ծրագրերի մասին: Խորհրդի ուշադրությանը ներկայացրեց տպագրված և ինդեքսավորված հոդվածների քանակը, նշեց դրամաշնորհային ծրագրերում և գիտական սեմինարներում ամբիոնի մասնակցությունն ու ակտիվությունը, ամբիոնում իրականացվող միջազգային դրամաշնորհները: Ա.Փիլոյանն անդրադարձավ ամբիոնի աշխատակիցների գիտաչափությանը և բարեվարքությանը: Բացի Ավստրիայի և Գերմանիայի հետ ստեղծված համագործակցությունից աշխատանքներ են տարվում Չինաստանի Երկրի մասին գիտությունների համալսարանի հետ համագործակցություն ստեղծելու ուղղությամբ (հաշվետվությունը կցվում է):

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ. դեկան Ս.Ս.Քելյանը նշեց, որ պաշտոնավարման կարճ ժամանակահատվածում **Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի և վարիչի ժ/պ Ա.Ս.Փիլոյանի** կողմից իրականացվել է հսկայածավալ աշխատանք թե գիտակ-կրթական և թե լսարանների և լաբորատորիաների մասնագիտական կահավորման առումով: Դեկան Ս.Ս.Քելյանն առաջարկեց ընդունել **Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի և վարիչի ժ/պ Ա.Ս.Փիլոյանի** հաշվետվությունն, իսկ ամբիոնում կատարած աշխատանքը գնահատել բավարար:

ՈՐՈՇԵՑԻՆ. **Ընդունել** Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի և վարիչի ժ/պ **Ա.Ս.Փիլոյանի** հաշվետվությունը և ամբիոնում կատարված աշխատանքը **գնահատել բավարար:**

6. ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

6.1 ԼՍԵՑԻՆ. Մեթոդ խորհրդի նախագահ Վ.Պ.Վարդանյանի հաղորդումը ԵՊՀ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Սերվիսի ամբիոնի դոցենտ Սեյրան Ռաֆիկի Սուվարյանի և նույն ամբիոնի ասիստենտ Ռենա Ռաֆայելի Վարդանյանի կողմից ներկայացված «Գովազդը և PR-ը սերվիսում» ուսումնամեթոդական ուղեցույցը տպագրության երաշխավորելու վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դոց.Ա.Հ.Պոտոսյանը, Տ.Ա.Սարգսյանը նշեցին, ուղեցույցի օգտակարությունն ու գրագետ շարադրանքը: Աշխատանքն անհրաժեշտ է ուսանողներին, քանի որ մանրամասնորեն ներկայացված են գործնական աշխատանքների կազմակերպման մոտեցումները: Ուղեցույցը խիստ կարևոր աշխատանք է, որտեղ հեղինակները բացահայտել են գովազդի և PR-ի բովանդակային գրեթե բոլոր հասկացությունները, վերլուծել խնդիրները, ներկայացրել գործառույթները:

ՈՐՈՇԵՑԻՆ. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Սերվիսի ամբիոնի դոցենտ Սեյրան Ռաֆիկի Սուվարյանի և նույն ամբիոնի ասիստենտ Ռենա Ռաֆայելի Վարդանյանի կողմից ներկայացված «Գովազդը և PR-ը սերվիսում» ուսումնամեթոդական ուղեցույցը երաշխավորել տպագրության:

6.2 ԼՍԵՑԻՆ. Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի հայցորդ Հովակիմ Բենիամինի Ֆրունզիկյանի ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

ԱՌԱՋԱՐԿԵՑԻՆ. Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի հայցորդ Հովակիմ Բենիամինի Ֆրունզիկյանի ատենախոսության թեմայի վերնագիր հաստատել **«Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրային օբյեկտների ջրաէկոլոգիական արդի վիճակի գնահատումը կլիմայի փոփոխության կոնտեքստում»** («Աշխարհագրություն» (Ֆիզիկական աշխարհագրություն և ջրաօդերևութաբանություն), դասիչ՝ ԻԴ.03.01), իսկ գիտական ղեկավար նշանակել Ֆիզիկական աշխարհագրության և

ջրաօդերևութաբանության ամբիոնի դոցենտ, աշխ. գիտ. թեկնածու Վարդուհի Գուրգենի Մարգարյանին:

ՈՐՈՇԵՑԻՆ. Բաց քվեարկության արդյունքներով ԿՈՂՄ՝ 25 ԴԵՄ՝ 0, ՁԵՌՆՊԱՀ՝ 0, Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի հայցորդ Հովակիմ Բենիամինի Ֆրունզիկյանի ատենախոսության թեմայի վերնագիր հաստատել **«Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրային օբյեկտների ջրաէկոլոգիական արդի վիճակի գնահատումը կլիմայի փոփոխության կոնտեքստում»** («Աշխարհագրություն» (Ֆիզիկական աշխարհագրություն և ջրաօդերևութաբանություն), դասիչ՝ ԻԴ.03.01), իսկ գիտական ղեկավար նշանակել Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի դոցենտ, աշխ. գիտ. թեկնածու Վարդուհի Գուրգենի Մարգարյանին:

Գիտական խորհրդի նախագահ՝ ***Ս.Ս.Քելյան***

Գիտական խորհրդի քարտուղար՝ ***Ե.Ս.Մանուկյան***